# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Սիուն ՍՊԸ-ն ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/17 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 5 | Գլխի ֆիքսացիայի ռետրակցիոն համակարգ | Գլխի ֆիքսացիայի ռետրակցիոն համակարգ | Գլխի ֆիքսացիայի ռետրակցիոն համակարգ | Գլխի ֆիքսացիայի ռետրակցիոն համակարգ | Գլխի փափուկ և կոշտ ֆիքսացիա նյարդավիրաբուժական վիրահատություններ իրականացնելու համար՝ այդ թվում և ճշգրիտ նշանառության պարագաների կիրառմամբ (նեյրոնավիգացիոն համակարգեր և մանրադիտակներ): Գանգի ֆիքսացիայի բազմաֆունկցիոնալ համակարգը կիրառելի է մեծերի և երեխաների համար՝ այդ թվում և նորածինների: Գանգի ֆիքսացիային ներկայացվող նվազագույն պահանջներն են՝ Պետք է ապահովի ֆիքսացիայի երկու տեսակ՝ 3 կամ 4 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | շտիֆտով ֆիքսացիա, ինչպես նաև ոչ ինվազիվ պահում: Շտիֆտերով ֆիքսացիան պետք է համատեղելի լինի գելային բարձիկի գործածման հետ: Պետք է ունենա հետևյալ հնարավորությունները՝ ռետրակցիոն համակարգերին և շրջանաձև էլեմենտներին ամրացման, վիրահատական սեղանին կողմնային ուղղորդման միջոցով և երկառանցք ֆիքսատորի միջոցով ֆիքսացիա: Պացիենտի դիրքի ապահովում՝ փորի վրա, մեջքի վրա, կողքի վրա (լատերալ մուտք): Պետք է ունենա արագ տեղադրման և պինդ ամրացման լծակ և պատահական անջատումը կանխարգելող ամրացման համակարգ: Հարմարակցիչի ամրանների բարձրությունը ոչ պական քան 120մմ: Գանգային ֆիքսատորը պետք է ունենա 360º թեքվելու հնարավորություն, բռնիչի և սեղմանի կառավարելի կոշտ միացման հնարավորություն, գլխի սեղմանով պացիենտի եռադիր կամ քառադիր ֆիքսացիա՝ բոլոր դիրքերում: Գանգային սեղմանի եզրերը հարթ են, նախատեսված՝ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հեշտ մաքրման համար: Գանգի բազմաֆունկցիոնալ ֆիքսատորի սեղմանի կառավարման ուժի սանդղակը ոչ պակաս քան 90/180/270/360 Ն, գանգային սեղմանի վրա ֆիքսող շտիֆտերի ծայրերի հեռավորության կառավարման միջակայք ոչ պակաս քան 95-215 մմ, Գլխի ֆիքսացիայի առանցքի և գանգային սեղմանի հիմքի վերին մակերեսի միջև հեռավորությունը ոչ պակաս քան 145 մմ: Գանգային սեղմանի վրա առավելագույն ծանրաբեռնվածությունը ոչ պակաս քան 12,5 կգ: Գելային բարձերով պայտաձև գլխատակ երկարացնիչով, մեծահասակի, մանկական: Լրակազմը պետք է ներառի առնվազն գլխի կոշտ և փափուկ ֆիքսացիայի համակարգ, մեծահասակների և մանկական գանգային ֆիքսատորի շտիֆտեր, չժանգոտվող պողպատից, նախատեսված, բազմակի օգտագործման համար, յուրաքանչյուրից 3 հատ, կառավարվող հենք, թեքվող միացման էլեմենտ, կողմնային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ռելսերին ամրացվող ուղղորդման հարմարակցիչ։ Ռետրակցիային ներկայացվող նվազագույն պահանջներն են՝ 360º կարգավորում յուրաքանչյուր ուղղությամբ: Հորիզոնական դիրքի հնարավորություն անկախ գանգային ֆիքսատորի դիրքից: Նյութը՝ չժանգոտվող պողպատից, Ռետրակտորի հենքի միացման հնարավորություն յուրաքանչյուր դիրքում, Միացված հենքի կայունություն և անվտանգություն, Գլխի ֆիքսացիայի համակարգի հետ ամբողջական համապատասխանություն։ Ճկուն թեքվող թևքերի երկարությունը ոչ պակաս քան 280 մմ, կոնաձև թիթեղները արտացոլման բացառման նպատակով պետք է լինեն՝ Սև, անփայլ, ունենան՝ տեֆլոնային ծածկույթ և արտակցիչ փոխարինման համար։ Կոնաձև թիթեղների ճկվող մասի երկարությունը ոչ պակաս քան 102 մմ, Կոնաձև թիթեղների ճկվող մասի լայնությունը ոչ պակաս քան 6-ից 25 մմ: Լրակազմն առնվազն պետք է ներառի՝ 2 հատ ճկուն պտտվող թևք, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ախտահանման բոքս (ռետրակտորների համար), 2 հատ ռելսին արագ միացնող էլեմենտ, 4 հատ միակցիչ, 2 հատ հենքի ձող, 2 հատ աղեղնաձև հենք, ախտահանման բոքս, 10 հատ կոնաձև թիթեղ: Համակարգը պետք է ամրացվի բժշկական կենտրոնում տրկաս Tekhard 700 վիրահատական սեղանին: Պահանջվող տեխնիկական բնութագրով համարժեք են համարվում DORO կամ Mayfield ապրանքանիշի ֆիքսատորները: Երաշխիքային ժամկետը ոչ պակաս, քան 24 ամիս: Համակարգի տեղադրումը և ուսուցումը իրականացվում է մատակարարի կողմից: Ապրանքը պետք է լինի նոր և նախկինում չօգտագործված: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Сиун в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/17 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 5 | | | | | |